ՀԱՆԴԻՊՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

Օգոստոսի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի և Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղարներ Ա. Խ. Վեզիրովի և Ս. Գ. Հարությունյանի հանդիպումը, որին մասնակցեց ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ներկայացուցիչ Ա. Ի. Վոլսկին:

Հանրապետությունների կուսակցական կազմակերպությունների ղեկավարները կարծիքներ փոխանակեցին Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի ընդունած որոշումների կատարման հարցերի շուրջը:

Կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզկոմի առաջին քարտուղար Հ. Ա. Պողոսյանը պատմեց մարզում տիրող իրադրության և հասարակական կյանքի առողջացման, այդ պրոցեսներում կուսակցական կազմակերպությունների դերի ուժեղացման ուղիների մասին:

Հանդիպման ժամանակ նշվեց, որ ինքնավար մարզում կուտակվել են ոչ քիչ թվով թերություններ ու դժվարություններ: Դա պահանջում է սպառիչ միջոցներ ձեռնարկել ստեղծված կացությունը շտկելու համար:

Անբույլատրելի է, որ միութենական մինիստրությունները ու գերատեսչությունները, հանրապետական ու մարզային մարմինները առայժմ դանդաղ են իրագործում կուսակցության ու կառավարության ընդունած որոշումները, այս կապակցությամբ մշակվեցին ԼՂԻՄ-ի սոցիալ-տնտեսական ու կուլտուրական զարգացումը արագացնելու համար երկու հանրապետությունների հնարավորությունները առավելագույնս օգտագործելու մի շարք կոնստրուկտիվ առաջարկություններ:

Այս հարցերի լուծման ասպարեզում Ադրբեջանի ու Հայաստանի հանրապետական կուսակցական կազմակերպությունները կգործեն սերտ համագործակցությամբ, վերակառուցման ոգով, ելնելով երկու ժողովուրդների, բոլոր սովետական մարդկանց արմատական շահերից, առաջնորդվելով Ադրբեջանի ու Հայաստանի աշխատավորներին, ժողովուրդներին ուղղված Մ. Ս. Գորբաչովի դիմումի դրույթներով:

Ստեփանակերտում գտնվելու ընթացքում հանդիպումներ ու զրույցներ տեղի ունեցան քաղաքի աշխատավորների հետ:

(ՏԱՍՍ)